

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՄԲ ՆՈՐՈԳՈՒԻՆՔ



Այսպէս կը յորդորէ շարականագիր վարդապետը Քրիստոսի Ս. Ծննդեան խորհուրդին անդրադառնալով՝ նորոգուիլ Քրիստոսով, նորոգելու եւ վերանորոգելու համար աստուածային իսկական պատկերը մեր կեանքին, մտքին, հոգիին եւ մեր ողջ էութեան մէջ:

Այս պատճառով ալ ժամանակներու լրումին Աստուած մարդուն հանդիպեցաւ եւ յայտնուեցաւ: Այս պատճառով՝ **«Անբաւելին երկնքի եւ երկրի մէջ, խանձարութիւն մէջ ամփոփուեցաւ եւ առանց Հօրմէ բաժնուելու Սուրբ Արքիին մէջ բազմեցաւ»** (Շարական):

Ինչ հրաշք, **«մեծ եւ սքանչելի խորհուրդ»** իրագործուեցաւ:

Տիեզերքի Արարիչը՝ Աստուած, մարդուն մասին մտածեց եւ մարդուն համար դրկեց Իր Միածին Որդին, **«որպէսզի Անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»** (Յհ 3.16):

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ զաւակներս միասնաբար տօնեցինք մեր Փրկիչին ծննդեան տօնը: Ծնունդը Նոր Արքայի, Բերդեհէմ քաղաքին մէջ, Անոր՝ ով աշխարհ եկաւ, մեր յաւիտենական փրկութեան համար:

Երկինքի հրեշտակները բարձրադաղակ գոչեցին՝ **«աստուածներու Աստուած եւ տէրերու Տէր, Դուն եւ Փրկիչը աշխարհի»**: Հովիւները հրեշտակներուն հետ միասին երգեցին՝ **«Փառք բարձունքներու Աստուծոյ»**: Մոգերը Բերդեհէմ եկան, Տիրոջ երկրպագեցին եւ ամենէն խորհրդանշական ու թանկագին նուէրները ընծայեցին:

Այսօր մենք ինչ կրնանք ընել, որպէս հաւատացեալներ: Պատրաստ ենք հրեշտակներուն հետ հաստատական ըսել՝ **«Դուն եւ մեր Փրկիչը»**, պատրաստ ենք հովիւներուն հետ փառաբանել Աստուծոյ եւ մոգերուն նման Տիրոջ երկրպագել եւ մանաւանդ՝ բանալ մեր սրտերն ու հոգիները եւ ամենէն թանկագին նուէրները ընծայել Իրեն:

Հետեւաբար, Սուրբ Ծննդեան Տօնը Աստուածայայտնութեան տօնն է, տօնը՝ Աստուծոյ եւ մարդու հանդիպման, տօնը՝ **ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ** ու **ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ...**

**Շնորհաւոր Նոր Տարի,
Քրիստոս Ծնաւ եւ Յայրնեցաւ,**

Թող այս մաղթանքը բխի ամենէն վսեմ զգացումներէն ու հաճութեան աղբիւրէն, որպէսզի Ս. Ծննդեան խորհուրդները մեր կեանքերուն մէջ ունենան մշտանորոգ ներգործութիւն, եւ Փայլուն Աստղը մեր ուղին լուսաւորէ ընդմիշտ:

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱՐԵԱՆ



Յիսուս Մանուկի ծնունդով, մարգարէներու կողմէ կանխագուշակուած մարդոց փրկութեան խոստումը իրագործուեցաւ:

Աստուած մարմնացաւ ու մարդացաւ՝ մեզ աստուածացնելու և կատարելութեան ճամբաներէն առաջնորդելու նպատակով:

Աստուածորդոյն պատգամներուն էութիւնը այսօր ևս մնացած է անփոփոխ: Սիրոյ, խաղաղութեան ու հաճութեան Անոր պատգամները այսօր նոյնքան ազդու կը հնչեն, որքան Իր ծննդեան ժամանակներուն:

Բերդեհէմի մտորին ճամբով աշխարհ եկող «Արքայ»ին երկրաւոր առաքելութիւնը եղաւ կարճատև, սակայն անոր թողած ժառանգութիւնը եղաւ հարուստ և թանկարժէք, որ Սիրոյ, Նոր Կեանքի ուսուցումներով յեղաշրջեց աշխարհն ու բոլոր ժամանակներու մարդոց կեանքը:

Ուրեմն, եկէ՛ք, 2020 տարին սկսինք այս կամքով, այս պատրաստականութեամբ և անցեալի իրագործումները նորերով հարստացնելու ձգտումով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ



ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԻՄԻՆ ՉՈՐՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԸ



ՍՈՒՐԲ ՄԱՏԹԷՈՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Չորս աւետարանիչներէն առաջինը Մատթէոսը Ղեւիի ցեղէն էր: Ինք իր մասին կը վկայէ թէ նախապէս մաքսաւոր էր: Երբ Կափառնաւոմ քաղաքին մէջ իր մաքսասեղանին առջեւ նստած էր, Յիսուս անցաւ քովէն եւ զայն տեսնելով ըսաւ. «Ետեւէս եկուր»: Իսկոյն թողուց ամէն ինչ եւ հետեւեցաւ Փրկչին, եւ եղաւ տասներկու առաքեալներէն մին:

Մինչեւ համբարձում մասնակից եղաւ կենարար Փրկչին բոլոր քարոզութիւններուն եւ գործունէութեան, եւ վերնատան մէջ ընդունելով Սուրբ Հոգիին շնորհքը, սկսաւ քարոզել Հրեաստանի սահմաններուն մէջ: Ապա, երբ պիտի մեկնէր հեռաւոր վայրեր՝ հոն եւս քարոզելու Աւետարանին խօսքը, Երուսաղէմի հաւատացեալները խնդրեցին իրմէ որ ցարդ քարոզածը իրենց փոխանցէ գրաւոր կերպով: Այսպիսով, Մատթէոս կիրթ լեզուով եւ օրուան եբրայերէնով գրեց իր աւետարանը, Քրիստոսի համբարձումէն 7-8 տարի յետոյ: Բայց քիչ ժամանակ յետոյ, աւետարանին քարոզութիւնը յունարէն լեզուով աւելի տարածուեցաւ, իսկոյն, Ս. Մատթէոս կամ այլ աշակերտ մը կատարեց յունական թարգմանութիւնը: Եւ տրուած ըլլալով որ եբրայական առաջին բնագիրը կորսուած էր, այնուհետեւ յունականը ընդունուեցաւ որպէս բնագիր:

Մատթէոսի վախճանի մասին կը պատմուին իրարմէ տարբեր բաներ: Ոմանք կը գրեն թէ ան մահացած է Եթովպիա կամ Հապեշիստան, իսկ ուրիշներ՝ Պարթեւաստան:



ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Քրիստոսի եօթանասուններկու աշակերտներէն էր եւ ձեռնասուինք Ս. Պետրոսի:

Մարկոս աւետարանիչ թարգմանն էր Ս. Պետրոսի, եւ եբրայերէնէն յունարէնի կամ լատիներէնի կը թարգմանէր անոր խօսածները: Ապա, նաեւ իր աւետարանը գրեց թելադրութեամբ Պետրոսի եւ ներշնչումով Սուրբ Հոգիին, Քրիստոսի համբարձումէն շուրջ 15 տարի յետոյ:

Ըստ աւանդութեան, շատ տարիներ Պետրոսի եւ Պօղոսի ընկերանալէ յետոյ, գնաց առանձին քարոզելու Եգիպտոս, Լիպիա, Պենտապոլիս եւ այլուր, եւ շատ հրաշքներ կը գործէր: Եւ այսպիսով բազմաթիւ հեթանոսներ դարձի բերաւ եւ կուռքերը կործանեց: Ապա գնաց Ադեքսանդրիա եւ հոն եւս սկսաւ քարոզել եւ հրաշքներ կատարել:

Հեթանոսները եւ հրեաները, նախանձելով, զայն մատնեցին իշխանութեանց, եւ զինք բանտ դրին:

Գիշերը հրեշտակ մը եկաւ բանտ եւ զինք քաջալերեց ըսելով. – Մի՛ վախնար, Մարկոս, Տիրոջ համար պիտի չարչարուիս, սակայն անունդ պիտի գրուի երանելի առաքեալներուն հետ, եւ պիտի չջնջուի:

Յաջորդ օրը դարձեալ քարշ տուին անոր մարմինը՝ մինչեւ որ Աստուծոյ ձեռքը յանձնեց իր հոգի, շուրջ 68 թուին, Պետրոսէն եւ Պօղոսէն մէկ տարի յետոյ:



ՍՈՒՐԲ ՂՈՒԿԱՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Ղուկաս Աւետարանիչ անտիոքացի էր եւ արհեստով բժիշկ: Քաջատեղեակ էր ասորերէն, եբրայերէն եւ յունարէն լեզուներուն:

Ան լսելով երկնաւոր բժիշկին արարքները եւ հրաշագործութիւնները, որ ի ծնէ կոյրին տեսողութիւն կը շնորհէր, կաղերը եւ անդամալոյծներ կը քալեցնէր, գնաց քովը, աչքերովը տեսաւ եւ հաւատաց: Եւ երբ Մարկոս եւ Բառնաբաս Կիպրոս գացին, Ղուկաս ալ, որպէս գործակից մսաց Պետրոսի մօտ, եւ անոր հետ ճամբորդեց մինչեւ Հռոմ:

Ապա ճամբորդեց մինչեւ Գաղղիա, Իտալիա եւ Մակեդոնիա, եւ որպէս հոգեւոր եւ մարմնաւոր բժիշկ կ'ամոքէր իր երկրաւոր հօտը: Հոն նոյնպէս հրաշքներ կը գործէր, առանց դէղի հիւանդներ կը բժշկէր եւ Աստուծոյ փարախը կը դարձնէր:

Ապա, գրեց աւետարանը, հաւանաբար իր ծննդավայրին՝ Անտիոքի մէջ, ասորերէն լեզուով:

Աւետարանէն տասը տարի ետք գրեց Գործք Առաքելոցը՝ ուղղուած Թէոփիլոսի:

Ութսուն կամ ութսունչորս տարեկան էր, երբ աւանդեց հոգին: Աւանդութեան համաձայն մարմինը կը գտնուի Կ. Պոլիս եւ բազմաթիւ հրաշքներ կը կատարուին այնտեղ:



ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Քրիստոսի սիրելի աշակերտը՝ Յովհաննէս, ըստ հայրերու աւանդութեան, Երուսաղէմ մսաց՝ մինչեւ Սուրբ Աստուածածնի վերափոխումը: Ապա սկսաւ քարոզել արեւելեան երկիրներու մէջ, եւ իր աթոռը հաստատեց Եփեսոսի մէջ:

Եփեսոսի մէջ առաջին գործը եղաւ աղօթքներով հիմնայատակ կործանել մեհեանները, եւ քարոզութեամբ՝ շատերը քրիստոնէութեան դարձուց:

Վեսպասիանոսի եւ Տիտոսի յաջորդ Դոմետիանոս կայսրը, լսելով կատարուածները զայն աքսորեց Հռոմ: Երբ այնտեղ եւս շարունակեց իր քարոզութիւնները զայն աքսորել տուաւ Եգէական ծովուն Պատմոս կղզին:

Դոմետիանոսի մահէն յետոյ, երբ թագաւորեց Ներուաս կայսրը, հրաման ըրաւ Ս. Յովհաննէսը աքսորավայրէն վերադարձնել Եփեսոս: Մինչ այդ, Պատմոս կղզիի բնակիչներուն բուռն փափաքով գրեց իր աւետարանը: Ապա տասը օր առանձնացաւ քարայրի մը մէջ եւ հոն գրեց այն հրաշալի տեսիլը՝ որ յիշուած է Յայտնութեան գիրքին մէջ:

Ըստ աւանդութեան, Սուրբ Յովհաննէս, զգալով իր մօտալուտ փոխումը աշխարհէն, իր աշակերտներուն տուաւ իր վերջին խրատները եւ օրհնութիւնը, ապա, բանալ տուաւ իրեն համար գերեզման մը, մէջը մտաւ եւ ամէնէն հրաժեշտ առնելէ յետոյ՝ քուն մտաւ: Ոմանք գալով՝ բացին տապանը, սակայն մարմինը չգտան, այլ միայն հողաթափերը, որովհետեւ Աստուած վերափոխած էր սուրբը, ինչպէս Միածինի մայր Աստուածածինը:



ՈՒՍԱՌՈՐԻՉ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԸՆՏԱՆԻՔԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԵԱՄԲ



Աստուածաշունչ Մատեանը մեզի կ'ուսուցանէ, որ Աստուած տեսնելով Ադամին միակութիւնը ըսաւ՝ «Իրեն նման օգնական մը տանք» եւ այդ որդեծնութեան կենակից պիտի ըլլայ մարդուն:

Աստուած սովորական օգնական մը չտուաւ Ադամին, այլ կեանքի ընկեր՝ լաւ եւ վատ օրերու համար:

Ադամն ու Եւան Աստուծոյ խօսքին համաձայն կոչուած էին մէկ մարմին ըլլալու, աստուծահաստատ հիմերով ամրացած ընտանիք մը կազմելու, զիրար ամբողջացնելու, սերնդագործելու, նոր արարչագործութեամբ երկիրը զաւակներով լեցնելու եւ Աստուծոյ փառքը տարածելու երկրի վրայ:

Ընտանիք հասկացողութիւնը պէտք է հիմնաւորուած ըլլայ սրբութեան, անկեղծութեան եւ համերաշխութեան վրայ: Քրիստոնէական հասկացողութեամբ այս է ընտանիք կազմելու հիմնաքարը, որ Աստուծոյ կողմէ փոխանցուած է մարդուն:

Ճշմարիտ սրբութենէն ստեղծուած մարդը կոչուած է սուրբ ըլլալու, սրբութեամբ ընտանիք կազմելու: Սուրբ է այն ընտանիքը, որ աստուծահաճոյ ու քրիստոնէավայել կեանք մը կապրի իր տունը եկեղեցիի եւ խորանի վերածելով: Սուրբ է այն ընտանիքը,

որ իր տունը կը հիմնէ աւետարանական այն ժայռին վրայ, ուր «Անձրեւներ կու գան, գետերը կը յորդին, հովեր կը փչեն եւ կը զարնուին տան, բայց տունը չի կործանիր, որովհետեւ Ժայռին՝ Քրիստոսի վրայ հաստատուած է» (Մտ 7.25):

Հայ ընտանիքը միշտ եղած է կորիզը ընկերութեան: Հոն կը գտնուի կեանքի առաջին դպրոցը, որուն ուսուցիչներն են ընտանիքի երկու սիւները՝ հայրն ու մայրը: Հայկական տոհմիկ տան մէջ է, որ պիտի թրծուին, հասակ առնեն եւ կեանքի կոչուին զաւակները:

Ահա թէ ինչու Աստուած կը թելադրէ զաւակները դաստիարակել սրբութեամբ՝ երբ անոնք տակաւին կակուղ թաթիկներ են, նոր պիտի թեւակոխեն կեանքի բոլորակին:

Սողոմոն Իմաստուն կ'ըսէ.- «Քանի որ յոյս կայ՝ տղադ խրատէ եւ անոր կորսուելուն կամակից պատճառ մի ըլլար» (Առ 29.17): Նաեւ կ'ըսէ.- «Խրատէ՛քու որդիդ, որպէսզի քեզ հանգստացնէ եւ քու հոգիդ զուարճացնէ» (Առ 29.17):

Սիրելի ընթերցող, ընտանիքը ամէն բանէ առաջ հաւաքական կեանք է, այլապէս ընտանիք չի՝ կրնար կոչուիլ եւ գոյութիւն ունենալ: Այր եւ կնոջ մտերմութիւնը պէտք է տարբերի որեւէ տեսակի մտերմութենէ եւ պէտք է Աստուծոյ սրբութեամբ շաղախուած ըլլայ:

Ծնողներ, հետեւաբար, իրենց վարքով ու ապրելակերպով, իրենց խօսքով ու մանաւանդ գործով իրենց զաւակներուն առաջին օրինակը տան կրօնքին իրենց կապուածութեան, բարեպաշտութեան եւ ազգային կեանքին մասնակցութեան:

Ուստի, սփիւռքի մէջ լաւ հայ երիտասարդներ ունենալու համար նախապայման է ունենալ վեհ սկզբունքներու տէր, կրօնասէր ու ազգասէր գիտակ ծնողներ, որոնց շունչով թրծուած զաւակները պիտի նմանին իրենց, ամէն տեսակի ազդեցութիւններու եւ օտարամուտ հովերու դիմաց փափով անշեղ, բարոյականի տէր ու ազգասէր երիտասարդներ:

ՏԱԹԵՒԻ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՅՑ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

YOUTH MISSION TRIP: ARMENIA

Հովանաւորութեամբ
Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կազմակերպութեամբ՝ Ազգային Առաջնորդարանի
Երիտասարդական Բաժանմունքին

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՅՑ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ
18-35 տարեկաններու համար
26 ՅՈՒՆԻՍ - 12 ՅՈՒԼԻՍ 2020

Մասնակցութեան սակ՝ \$2,000 (առաւել թոյիչ)
Հեռաձայնեցէք՝ 514-856-1200 թիւին
Գրեցէք՝ vicar@armenianprelacy.ca

Under the Auspices of
His Eminence Archbishop Papken Tcharian
Prelate of Canada

Organized by the Youth Ministry of the Armenian Prelacy

YOUTH MISSION TOUR: ARMENIA
For the Youth aged 18-35
June 26 - July 12, 2020

Participation fee: \$2,000 (plus airfare)
For more information call 514-856-1200
E-mail: vicar@armenianprelacy.ca





ՌԻՍԱԲՈՐԻՉ

ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱՆ

Երբ Մանուկ Յիսուս ծնաւ, երեք մոգեր Խամբայ ելան դէպի Բեթլեհէմ՝ րեսնելու Բամար Յիսուսը: Պուղէ՛ մոգերը, որպէսզի Բասնին Յիսուսին:

Նարդա՛ անոնց պարմութիւնը Մարթէոս 2. 1-12 Բամարներուն մէջ:



Հովանաւորութեամբ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱՐԳԷՆ ԱՐԲ. ՉԱՐԵԱՆԻ
Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի

Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը Կը ներկայացնէ՝

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ներածութիւն Հին և Նոր կտակարաններու
Համառոտ Պատմութիւն Հայ Եկեղեցւոյ
Քրիստոնէական Գիտելիքներ
Գրաբարի Գործնական Դասընթացք
Պատմութիւն Հայոց Հին Մատենագրութեան

Սկսեալ՝ 3 Փետրուար 2020-էն
Ամէն Երկուշաբթի երեկոները ժամը 20:00 - 21:30
Ազգային Առաջնորդարանի
«Երուանդ և Անի Պատմաճեան» Դահլիճէն ներս

Մանրամասնութեան համար գրել՝ Prelacy@armenianprelacy.ca հասցէին



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան
3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5